Մոսխորհրդի պատգամավորները պահանջում են դադարեցնել ռազմական ուժի գործադրումը Հայաստանի նկատմամբ

Մոսկվա, 21 մայիս, interfax

Մոսխորհրդի 105 ժողովրդական պատգամավորներ ստորագրեցին ԽՍՀՄ պրեզիդենտին եւ Գերագույն խորհրդին ուղղված դիմում, որն ընդունվել էր հայ-ադրբեջանական ընդհարումների շրջան կատարած իրենց դեպուտատական խմբի այցից հետո: Պատգամավորները պահանջում են անհապաղ դադարեցնել խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի մասնակցությունը Հայաստանի տարածքում պատժիչ գործողություններին եւ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բռնի տեղահանմանը:

Մարդու իրավունքների պահպանումը վերահսկելու եւ կինված բախումները կանխելու համար պատգամավորները պահանջում են այդ շրջան դիտորդներ ուղարկել:

Միաժամանակ նրանք կոչ են անում դիմել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, իրագործելով ՄԱԿ-ի «Եղեռնը կանխելու եւ դրա համար պատժելու» կոնվենցիան, քննարկելու Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած եղեռնի փաստը: □